Դուք կրծքագեղձի կամ արգանդի վզիկի քաղցկեղ ունե՞ք: Ձեզ մտահոգու՞մ են բուժման ծախսերը:

Հնարավոր է, որ Դուք համապատասխանեք կրծքագեղձի քաղցկեղ, արգանդի վզիկի քաղցկեղ կամ և՛ մեկը, և՛ մյուսն ունեցող անձանց համար նախատեսված՝ «Medi-Cal»-ի հատուկ ծրագրի չափանիշներին: Եթե Դուք իրավունակ լինեք, ծրագիրը կվճարի Ձեր բուժման ծախսերը: Այդ ծրագիրը կոչվում է «Կրծքագեղձի և արգանդի վզիկի բուժման ծրագիր» կամ «BCCTP»:

Ցանկացած տարիքի, ներգաղթային կարգավիճակի և գենդերային ինքնության անձինք կարող են իրավունակ լինել BCCTP-ի համար: Դուք կարող եք իրավունակ ճանաչվել անգամ եթե նախկինում չեք կարողացել «Medi-Cal» ստանալ, կամ Ձեր «Medi-Cal»-ն ավարտվել է: Կարող եք իրավունակ ճանաչվել նաև այն դեպքում, եթե առողջության այլ ապահովագրություն ունեք:

Դրա համար՝ Դուք պետք է արգանդի նախավզիկի, արգանդի վզիկի կամ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշում ունենաք և բուժման կամ հետբուժական խնամքի կարիք ունենաք: Բացի այդ, Դուք պետք է բնակվեք California-ում և բավարարեք եկամտի մասին որոշակի պահանջներ:

«Կրծքագեղձի և արգանդի վզիկի բուժման ծրագրի» (BCCTP) համար դիմելու 2 եղանակ կա:

1. **Խոսեք Ձեր բժշկի հետ**: Հարցրեք, թե արդյոք նա մասնակցում է *«Every Woman Counts»* կամ *«Family PACT»* ծրագրերին: Եթե այո, նա կարող է դիմել Ձեզ համար: California-ում շատ բժիշկներ են մասնակցում այս ծրագրերին:

   Եթե Ձեզ օգնություն է հարկավոր այս ծրագրերին մասնակցող բժիշկ գտնելու հարցում, Դուք՝

   Կարող եք զանգահարել *«Every Woman Counts»* և կրծքագեղձի կամ արգանդի

վզիկի քաղցկեղի բժիշկ գտնել Ձեր մոտակայքում:

- Զանգահարեք (800) 511-2300
- Այցելեք www.dhcs.ca.gov/services/cancer/EWC/Pages/ewc-clinic-locator.aspx

Կարող եք զանգահարել *«Family PACT»* և արգանդի վզիկի քաղցկեղի բժիշկ գտնել Ձեր մոտակայքում:

- Զանգահարեք (916) 650-0414

2. **Խոսեք Շրջանի՝ իրավունակության հարցերով որևէ աշխատակցի հետ:** Ասացեք նրան, որ կրծքագեղձի կամ արգանդի վզիկի քաղցկեղ ունեք և ցանկանում եք անդամագրվել BCCTP-ին:

   Շրջանի՝ իրավունակության հարցերով աշխատակիցը Ձեր տվյալները կուղարկի BCCTP-ի՝ իրավունակության հարցերով մասնագետին: BCCTP-ի՝ իրավունակության հարցերով մասնագետը Ձեզ նամակով կտեղեկացնի, թե արդյոք BCCTP-ի Ձեր իրավունակությունը հավանության է արժանացել:

   Բացի այդ, Շրջանի իրավունակության հերցերով աշխատակիցը կստուգի, թե արդյոք Դուք իրավունակ եք «Medi-Cal»-ի համար: Նա Ձեզ նամակով կտեղեկացնի, թե արդյոք «Medi-Cal»-ի Ձեր իրավունակությունը հավանության է արժանացել:

   - Ավելին իմացեք՝ այցելելով www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/BCCTP.aspx